ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի Կ-218-Ա ԵՎ Կ-219-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ *կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.*

1. Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին» Կ-219-Ա կարգադրության 1-ին հավելվածում՝

1) «ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի քարտուղարություն» բաժնի «Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն» տողը շարադրել նոր խմբագրությամբ և «Ընդամենը» տողի «60» թիվը փոխարինել «62» թվով.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ			
Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն			
36	Համակարգող փորձագետ	Պետական ծառայող	1
37	Փորձագետ (մասնագետ)	Պետական ծառայող	2
38	Գործավար	Տեխնիկական սպասարկում իրականացնող	1
Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն			
36.1	Համակարգող փորձագետ	Պետական ծառայող	1
37.1	Փորձագետ (մասնագետ)	Պետական ծառայող	2
38.1	Գործավար	Տեխնիկական սպասարկում իրականացնող	1

2) 109-րդ կետի «Պաշտոնի տեսակը» սյունակի «Տեխնիկական սպասարկում իրականացնող» բառերը փոխարինել «Քաղաքացիական աշխատանք կատարող» բառերով.

3) 171-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «19» թիվը փոխարինել «23» թվով.

4) Վերջին «Ընդամենը» տողի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «594» թիվը փոխարինել «600» թվով:

2. Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայության

պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» Կ-218-Ա կարգադրության 1-ին հավելվածի՝

1) 2.1-րդ գլխում՝

ա. լրացնել նոր 33.1-րդ և 33.2-րդ կետեր.

«33.1 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության համակարգող փորձագետ,

33.2 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության համակարգող փորձագետ,».

բ. 34-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 2.2-րդ գլխում՝

ա. լրացնել նոր 17.1-րդ, 17.2-րդ, 17.3-րդ և 17.4-րդ կետեր.

«17.1 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ (մասնագետ),

17.2 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ (մասնագետ),

17.3 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ (մասնագետ),

17.4 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ (մասնագետ),».

բ. 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

2021թ. Օգոստոսի 26
Երևան
Կ- 121 -Ա